ԼԵՎՈՆ ԶՈՒՐԱԲՅԱՆ

1917-1939ԹԹ. ՊԱՂԵՍՏԻՆՈՒՄ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀՐԵԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՕՋԱԽԻ ՀԱՐՑԸ

1917թ. Մեծ Բրիտանիայի կողմից լայն շրջանառության մեջ դրվելուց հետո «հրեա ժողովրդի համար ազգային օջախ»[1] արտահայտությունն ի սկզբանե պարզաբանման անհրաժեշտություն առաջ բերեց: 1922թ. Ազգերի Լիգայի հաստատած Պաղեստինի մանդատի մասին համաձայնագրում և մանդատատեր Մեծ Բրիտանիայի՝ 1922, 1930 և 1939թթ. Պաղեստինում բրիտանական քաղաքականության վերաբերյալ հայտարարություններում այդ առնչությամբ որոշ բացատրություններ տրվեցին, սակայն հիշատակված փաստաթղթերից միայն վերջինում փորձ արվեց ինչ-որ չափով հստակեցնել վերոհիշյալ արտահայտությունը: Այդ առումով, ենթամանդատային Պաղեստինում բրիտանական քաղաքականության մեջ հրեական ազգային օջախի հարցի զբաղեցրած տեղի ու նշանակության ուսումնասիրությունը խիստ հետաքրքրական է:

XIX դ. վերջին պատմության թատերաբեմ իջած քաղաքական սիոնիստական շարժումն իր առջև նպատակ էր դրել Պաղեստինում ստեղծել հրեական պետություն՝ փորձելով այդ հարցում համագործակցության եզրեր գտնել տարբեր երկրների կառավարությունների հետ[2]: Առաջին աշխարհա-

---

[1] Ըստ արևմտյան պատմաբաններ Հուրևիցի և Թեյլորի՝ դեռ 1897թ. Բազելում կայացած առաջին սիոնիստական համագումարում սիոնիստական շարժումը հայտարարել էր իր հիմնական նպատակը՝ «հրեա ժողովրդի համար հասարակական իրավունքով ամրագրված *օջախ* ստեղծել Պաղեստինում»: Մանրամասն տե՛ս „The Basle Program of the World Zionist Organization, 29 August, 1897".- J. C. Hurewitz, Diplomacy in the Near and Middle East, Vol. I. New York, 1956, p. 209; Alan R. Taylor, Prelude to Israel, Beirut, 1970, p. 5. Խորհրդային պատմաբան Սերգեևը այդ առնչությամբ, առանց աղբյուրը նշելու, գրել է, թե 1897թ. Բազելում սիոնիզմի նպատակ հռչակվեց «հրեա ժողովրդի համար հասարակական իրավունքով ամրագրված *ազգային օջախը* Պաղեստինում»: Մանրամասն տե՛ս, С. М. Сергеев, Израиль в системе международного сионизма — Сборник статей: „Государство Израиль", Москва, 1982. Մենք հակված ենք հավաստի համարելու արևմտյան պատմաբանների պնդումը՝ հիմք ընդունելով այն, որ Հուրևիցը ներկայացրել է վերահիշյալ համագումարում ընդունված վերջնական բանաձևի տեքստը:

[2] Մանրամասն տե՛ս <<مقررات مؤتمر بال سنة 1897>>. - ملف وثائق فلسطين. القاهرة. 1969. ص 109.

بسام مصلح. تيودور هرتزل. الدراسات الفلسطينية. العدد18. تشرين الأول-الثاني ص 128.

Desmond Stewart, Herzl's Journeys in Palestine and Egypt, Palestinian Studies, Vol. 3, No. 3, 1974, p. 29; Alan R. Taylor, Zionist Ideology, The Middle East Journal, Vol. 18, No. 4, Autumn 1964, pp.

մարտը լայն հնարավորություններ ընձեռեց սիոնիստներին՝ այդ նպատակի իրականացման գործում աջակիցներ ձեռք բերելու համար: 1897թ. Շվեյցարիայի Բազել քաղաքում հիմնադրված Համաշխարհային սիոնիստական կազմակերպությունը (ՀՍԿ) փորձեց պատերազմական իրադրությունը և աստիճանաբար սիոնիստական գաղափարախոսությանը հարող աշխարհասփյուռ ազդեցիկ հրեաների կարողություններն օգտագործել հօգուտ հրեական պետության ստեղծման[3]: Նախապես հարաբերություններ ունենալով պատերազմող հիմնական կողմերի հետ՝ սիոնիստներն, այնուամենայնիվ, մեծ մասամբ հակված էին համագործակցության եզրեր գտնելու հատկապես Մեծ Բրիտանիայի հետ՝ հաշվի առնելով նաև այդ տերության՝ հարաբերականորեն ավելի մեծ ազդեցությունը Մերձավոր Արևելքում[4]: Պատահական չէ, որ առաջին աշխարհամարտի ընթացքում ակտիվացան սիոնիստական շարժման ներկայացուցիչների շփումները բրիտանացիների հետ[5]:

Դեռ 1840թ. Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Հենրի Փալմերսթոնը հանդես էր եկել հրեաներին Պաղեստինում բնակեցնելու առաջարկությամբ՝ հուսալով, ի դեմս նրանց, բրիտանացիների համար ամուր հենարան ստեղծել Մերձավոր Արևելքում[6]: Իսկ առաջին աշխարհամարտում սիոնիստների հետ համաձայնության գալու համար բրիտանացիները մի քանի պատճառ ունեին.

1. նախ՝ օժանդակելով սիոնիստական շարժմանը՝ Պաղեստինում, ի դեմս հրեաների, ստեղծել ամուր հենարան՝ նկատի առնելով սահմանակից եգիպտոսում Մեծ Բրիտանիայի դիրքերի ամրապնդման անհրաժեշտությունը և այդ համատեքստում՝ Պաղեստինի աշխարհագրական և ռազմավարական դիրքը՝ որպես նաև Հեռավոր Արևելքի հետ կապուղի[7];

434-436; Lorand Gaspar, Histoire de la Palestine, Paris, 1968, p. 63; Martin Peretz, The God That Did not Fall, The New Republic, Vol. 217, Issue 10-11, September 1997, pp. 2-13; Теодор Герцль, Избранное, Иерусалим, 1974, стр. 1; Ахад Гаам. Избраннія, Москва, 1919, стр. 3.

[3] أسعد عبد الرحمن. المنظمة الصهيونية العالمية. بيروت. 1947. ص 34–24.

[4] Арабские страны: История, Экономика, Москва, 1966, стр. 42; Robert John and Sami Hadawi, The Palestine Diary, Beirut, 1970, pp. 59-74.

[5] Alan R. Taylor, Prelude to Israel, pp. 13-19.

[6] <<مذكرة بالمرستون إلى سفير بريطانيا في تركيا بخصوص توطين اليهود في فلسطين. 11 أغسطس. سنة 1840>>.- وثائق فلسطين. بيروت. 1987. ص 9.

[7] <<مذكرة هربرط صموئل الى الحكومة البريطانية بشان وضع فلسطين بعد الحرب. 5 فبراير. سنة 1915>>.- ملف وثائق فلسطين. ص 159-163.

George Antonius, The Arab Awakening, London, 1945, p. 261.

2. ապա՝ սիրաշահել և բրիտանական ազդեցության ոլորտ ներքաշել Գերմանիայի և Ավստրիայի հրեաներին, որոնք փորձում էին ստանալ Գերմանիայի աջակցությունը հրեական պետության ստեղծման հարցում[8];

3. օգտագործել ամերիկաբնակ հրեաների ազդեցությունն ԱՄՆ-ի կառավարության վրա՝ համոզելու վերջինիս նախ՝ ներքաշվել, ապա՝ ավելի մեծ չափով ներգրավվել Անտանտի երկրների կողքին պատերազմի մեջ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ և Մեծ Բրիտանիայի, և Ֆրանսիայի կարողություններն այդ պատերազմի հետևանքով բավականաչափ նվազում էին, իսկ Ռուսաստանում բուռն կերպով զարգանում էր հեղափոխական շարժումը[9];

4. ինչպես նաև այդ աշխարհամարտում ակտիվ պահել Ռուսաստանին, որտեղ Կերենսկու կառավարության կազմում ընդգրկված էին հրեա բարձրաստիճան պաշտոնյաներ[10]:

Դրանք էին այն հիմնական շարժառիթները, որ մղեցին Մեծ Բրիտանիայի կառավարությանը 1917թ. փետրվարին լիազորելու իր ներկայացուցիչ Մարկ Սայքսին սիոնիստական շարժմանն աջակցելու հարցի շուրջ քննարկումներ վարել ՀՍԿ-ի պատվիրակ Նահում Սոկոլովի հետ[11]: Այդ քննարկումների արդյունքում սիոնիստների հետ համաձայնության եզրեր գտնելով և նաև նրանց ներգործությամբ ստանալով ԱՄՆ-ի հավանությունը[12], 1917թ. նոյեմբերի 2-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Արթուր Ջեյմս Բալֆուրը նամակ ուղարկեց ազգությամբ հրեա լորդ Ռոտչիլդին (այդ նամակը պատմության մեջ մտավ «Բալֆուրի հռչակագիր» անունով), որում նշվում էր. «Հարգելի՝ լորդ Ռոտչիլդ, ես պատիվ ունեմ Նորին մեծության կառավարության անունից Ձեզ հանձնելու կառավարությանը ներկայացված և նրա կողմից հաստատված, հրեական սիոնիստական նպատակների իրականացմանն աջակցող հետևյալ հռչակագիրը՝

Նորին մեծության կառավարությունը բարեհաճությամբ է վերաբերվում Պաղեստինում հրեա ժողովրդի համար ազգային օջախ հիմնելու գաղափարին և ամեն ինչ կանի այդ նպատակն իրագործելու հարցում աջակցություն ցույց տալու համար: Ինքնըստինքյան հասկանալի է, որ չպետք է ոտնահարվեն

---

[8] George Antonius, նշվ. աշխ., էջ 261; William Ziff, The Rape of Palestine, New York, 1938, p. 43.
[9] Hisham H. Ahmed, From the Balfour Declaration to World War II: The U. S. Stand on Palestinian Self-determination, Arab Studies Quarterly, Vol. 12, Issue 1-2, Winter-Spring 1990, pp. 9-33; Е. Дмитриев, Палестинская трагедия, Москва 1986, стр. 9.
[10] Fred J. Khouri, The Arab-Israeli Dilemma, New York, 1968, pp. 359-360; Alan R. Taylor, Prelude to Israel, pp. 19-20.
[11] George Antonius, նշվ. աշխ., էջ 263:
[12] Robert John and Sami Hadawi, նշվ. աշխ., էջ 78-85:

Պաղեստինի ոչ հրեա համայնքների կրոնական ու քաղաքացիական իրավունքները և կամ էլ որևէ այլ երկրում բնակվող հրեաների իրավունքներն ու քաղաքական կարգավիճակը:

Ես երախտապարտ կլինեմ, եթե Դուք այս հռչակագրի մասին տեղեկացնեք Սիոնիստական կազմակերպությանը (ՀԱԿ-ին – Լ. Զ.)»[13]:

Թեև սիոնիստների նպատակը Պաղեստինում հրեական պետության ստեղծումն էր և ոչ այն, ինչ խոստանում էին բրիտանացիները, սակայն Բալֆուրի հռչակագիրը մեծ տերություններից մեկի առաջին պաշտոնական հայտարարությունն էր, որ աջակցում էր սիոնիստական ծրագրին, և լուրջ ձեռքբերում էր այդ պետության ստեղծման ճանապարհին: Այդուհանդերձ, «հրեա ժողովրդի համար ազգային օջախ» արտահայտությամբ Մեծ Բրիտանիան գործնականում խուսավարելու հնարավորություն ստացավ, քանի որ գոյություն չուներ պատմության համար նորույթ հանդիսացող «ազգային օջախի» նշանակությունը բանաձևող որևիցե փաստաթուղթ: Այդ էր պատճառը, որ Բալֆուրի հռչակագիրը տարբեր մեկնաբանությունների տեղիք տվեց: 1919թ. փետրվարի 14-ին ՀԱԿ-ի փոխնախագահ Խայիմ Վայցմանն ԱՄՆ-ի պետքարտուղար Ռոբերտ Լանսինգի հետ հանդիպման ընթացքում հայտարարեց, որ հիմնվելով Բալֆուրի հռչակագրի վրա՝ սիոնիստական շարժումը մտադիր էր՝

1. ապահովել տարեկան 70-80 հզ. հրեայի ներգաղթը Պաղեստին՝ նպատակ ունենալով ստեղծել հրեական մեծամասնություն;

2. այդ երկրում հիմնադրել եբրայերենի ուսուցմամբ հրեական դպրոցներ;

3. դարձնել Պաղեստինն այնքան հրեական, որքան Անգլիան անգլիական էր և Ամերիկան ամերիկյան[14]:

Այսինքն, սիոնիստների կարծիքով, Բալֆուրի հռչակագիրը հնարավորություն էր տալիս Պաղեստինը վերածել հրեական պետության, որը մտավախության տեղիք էր տալիս այդ երկրում բացարձակ մեծամասնություն

---

[13] <<تصريح بلفور>>- ملف وثائق فلسطين. ص 217.

В. И. Кисилев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, Москва, 1988, стр. 26; В. П. Ладейкин, Источник опасного кризиса, Москва, 1973, стр. 55; Г. С. Никитина, Государство Израиль, Москва, 1968, стр. 23; Е. Дмитриев, Палестинский узел, Москва, 1978, стр. 18; Е. Дмитриев, В. Ладейкин, Путь к миру на Ближнем Востоке, Москва, 1978, стр. 18; Richard P. Stevens. Zionism and Palestine Before The Mandate. Beirut, 1972, p. 31; Balfour Declaration, http://www.mideastweb.org/mebalfour.htm.

[14] Robert Lansing. The Peace Negotiations: A Personal Narrative, New York, 1921, p. 196; Арабские страны: История, Экономика..., стр. 44.

հանդիսացող արաբներին: Պաղեստինցի արաբներն, ընդհանուր առմամբ, հավատացած էին, որ Բալֆուրի հռչակագիրը կնպաստեր հրեաների՝ XIX դ. կեսերին սկսված ներգաղթի չափերի աննախադեպ աճին, որն էլ կհանգեցներ Պաղեստինում արաբների նկատմամբ նրանց տնտեսական և քաղաքական գերակայությանը[15]:

Առաջին աշխարհամարտում հաղթանակած երկրների Գերագույն խորհրդի՝ 1920թ. ապրիլին Սան-Ռեմոյում կայացած կոնֆերանսում Մեծ Բրիտանիան ստանձնեց Պաղեստինը կառավարելու մանդատը[16]: Ավելի ուշ՝ 1921թ. հուլիսի 6-ին Ազգերի Լիգայում առաջ քաշվեց Պաղեստինի մանդատի մասին համաձայնագրի նախագիծը, որը վավերացվեց 1922թ. հուլիսի 24-ին և ուժի մեջ մտավ 1923թ. սեպտեմբերի 29-ին[17]: Այդ համաձայնագրով մանդատատեր Մեծ Բրիտանիան, ի թիվս այլ պարտավորությունների, հանձն էր առնում՝

1. պայմաններ ապահովել Պաղեստինում «հրեա ժողովրդի համար ազգային օջախի» ստեղծման համար՝ այդ հարցում համագործակցելով համապատասխան հրեական գործակալության հետ;

2. դրա ստեղծմանը նպաստելու նպատակով խթանել հրեաների ներգաղթը Պաղեստին՝ հաշվի առնելով այդ երկրի՝ գաղթականներ ընդունելու տնտեսական կարողությունը, և բնակեցնել նրանց անմշակ և անմարդաբնակ հողերում՝ չոտնահարելով այդ երկրի մյուս համայնքների իրավունքները;

3. խթանել ներգաղթող հրեաների՝ Պաղեստինի քաղաքացիության ձեռքբերումը;

4. ընդունել եբրայերենը՝ որպես Պաղեստինի երեք պաշտոնական լեզուներից (մյուս երկուսն անգլերենն ու արաբերենն էին) մեկը[18]:

Փաստորեն, Պաղեստինի մանդատի մասին համաձայնագրում նույնպես չէր հստակեցվում, թե հրեական ազգային օջախի ստեղծման նպատակով որքա՞ն հրեա պետք է ներգաղթեր Պաղեստին՝ դառնալով այդ երկրի քաղաքացի, և հրեաները որքա՞ն հող պետք է ձեռք բերեին Պաղեստինում, թեպետ ավելի մանրամասն էին ներկայացվում այդ օջախի ստեղծմանն ուղղվելիք քայլերը, քան Բալֆուրի հռչակագրում: Համենայն դեպս, այդ համաձայնագիրը բավարար նախադրյալներ էր ստեղծում Պաղեստինում հրեական համայնքի դիրքերի ամրապնդման համար: Մի կողմից, սիոնիստական շարժումը դե

---

[15] Robert John and Sami Hadawi, նշվ. աշխ., էջ 185:

[16] الدكتورعلي سلطان. تاريخ سورية 1918-1920. دمشق. 1987. ص 427.

[17] <حصك الانتداب على فلسطين>>.- وثائق فلسطين. ص 105-112.

[18] Նույն տեղում:

ֆակտո հնարավորություն էր ստանում հրեական պետության ստեղծմանն ուղղված ակտիվ միջոցներ ձեռնարկել, որի համար, ըստ էության, անհրաժեշտ էր հիմնականում լեզվակիր ժողովուրդ և հող: Մյուս կողմից, Պաղեստինի մանդատի մասին համաձայնագիրը դե յուրե հիմք չէր հանդիսանում հրեական պետության ստեղծման համար, քանի որ բրիտանական մանդատային իշխանությանը պարտավորեցնում էր նպաստել հրեական «ազգային օջախի», ոչ թե պետության ստեղծմանը: Այսպիսով, Ազգերի Լիգան տվյալ ժամանակաշրջանում միջազգային ամենախոշոր կազմակերպությունը, վավերացնելով Պաղեստինի մանդատի մասին համաձայնագիրը, հավանություն տվեց վերոհիշյալ հռչակագրին: Սակայն, ինչպես նշեցինք, այն ամբողջությամբ չպարզաբանեց «ազգային օջախ» արտահայտությունը:

1922թ. հունիսի 3-ին Նորին մեծության կառավարությունը հրապարակեց ենթամանդատային Պաղեստինում բրիտանական քաղաքականության վերաբերյալ առաջին հայտարարությունը՝ Չերչիլի Սպիտակ թուղթը (կոչվում էր գաղութների նախարար Ուինսթոն Չերչիլի անունով), որում գաղութների նախարարը, փորձելով ինչ-որ չափով վանել ստեղծվելիք հրեական ազգային օջախի հետ կապված անորոշությունը, որոշ բացատրություններ տվեց այդ առնչությամբ, որոնք, սակայն, բավարար չէին: Չերչիլի Սպիտակ թղթում հաստատվում էր, որ Բալֆուրի հռչակագրի ոչ պաշտոնական մեկնաբանությունները, մասնավորապես այն, որ Պաղեստինը դառնալու էր այնքան հրեական, որքան Անգլիան անգլիական էր, մտավախության տեղիք էին տվել պաղեստինցի արաբներին: Սակայն Նորին մեծության կառավարությունը պնդում էր, որ մտադիր չէր Պաղեստինն ամբողջությամբ վերածել հրեաների համար ազգային օջախի, այլ նպատակ ուներ նման մի օջախ ստեղծել այդ երկրում, այսինքն՝ հնարավորություն տալ աշխարհասփյուռ հրեաներին իրենց միջոցներով աջակցել Պաղեստինում հրեական համայնքի զարգացմանը և այդ երկրի՝ գաղթականներ ընդունելու տնտեսական կարողությունը հաշվի առնելով՝ խթանել հրեաների ներգաղթը: Բացի այդ, Չերչիլի Սպիտակ թղթի համաձայն՝ Պաղեստինում հրեական ազգային օջախը նշանակում էր «կենտրոն», որտեղ հրեա ժողովուրդն ազգային ու կրոնական խտրականությունների չէր ենթարկվի, այլ պաղեստինցի արաբների հետ կողք-կողքի կզարգացներ այդ երկիրը[19]:

---

[19] «الكتاب الابيض الذي أصدره وزير المستعمرات البريطانية في يونيو سنة 1922».- ملف وثائق فلسطين. ص 325-327.

Այդուհանդերձ, Չերչիլի Սպիտակ թուղթը ոչ միայն ամբողջությամբ չպարզաբանեց ստեղծվելիք հրեական ազգային օջախի նշանակությունը, այլև նոր հարցադրումների տեղիք տվեց:

Հարկ է նշել, որ դեռ մինչև Բալֆուրի հռչակագիրը՝ 1914թ., մոտ 85 հզ. հրեա բնակվում էր Պաղեստինում՝ կազմելով այդ երկրի ընդհանուր բնակչության (մոտ 738 հզ.) 11 %-ից ավելին[20], և հրեական համայնքը հատուկ խտրականությունների չէր ենթարկվում[21]: Ավելին, մինչև Չերչիլի Սպիտակ թուղթը պաղեստինցի հրեաներն արդեն հիմնել էին իրենց ներքին ինքնակառավարման կառույցները, ունեին սինագոգներ, դպրոցներ և այլն[22]: Այսինքն, կարելի է ասել, որ մինչև այդ Սպիտակ թուղթը Պաղեստինում գոյություն ուներ կենտրոն, որտեղ հրեա ժողովրդի նկատմամբ ընդգծված ազգային ու կրոնական խտրականություններ չկային: Ուստի, «հրեա ժողովրդի համար ազգային օջախն» այլ բացատրություն էր պահանջում: «Ազգային օջախ» բառակապակցությունը «կենտրոն» բառով փոխարինելն այնքան էլ արդյունավետ չէր, քանի որ այդպիսով անհրաժեշտություն էր առաջացնում լուսաբանել և՛ առաջինը, և՛ երկրորդը:

Համենայն դեպս, Չերչիլի Սպիտակ թուղթը չփոխեց Բալֆուրի հռչակագրի նկատմամբ պաղեստինցի արաբների տրամադրությունը: Նրանք շարունակաբար դժգոհում էին մանդատային իշխանությունից՝ պահանջելով չեղյալ հայտարարել այդ հռչակագիրը և դադարեցնել հրեաների ներգաղթը Պաղեստին[23]:

1930թ. հոկտեմբերի 21-ին Մեծ Բրիտանիայի կառավարությունը հրապարակեց ենթամանդատային Պաղեստինում բրիտանական քաղաքականության վերաբերյալ երկրորդ հայտարարությունը, որը գաղութների նախարարի անունով կոչվեց Փասֆիլդի Սպիտակ թուղթ: Այդ հայտարարության մեջ կրկնվում էին Չերչիլի Սպիտակ թղթում «հրեա ժողովրդի համար ազգային օջախի» առնչությամբ տրված բացատրությունները: Սակայն ընդգծվում էր հատկապես Պաղեստինի մանդատի մասին համաձայնագրի այն դրույթը, որ հրեաների ներգաղթով պետք է չոտնահարվեին մյուս համայնքների իրավունք-

---

[20] Justin McCarthy, Palestine`s Population During the Ottoman and the British Mandate Periods, http://www.Palestineremembered.com/ Acre/Palestine_Remembered/Story559.html.

[21] Ali Ibrahim Abdo, Khairieh Kasmieh, Jews of the Arab Countries, Beirut, 1971, pp.10-16.

[22] <<الكتاب الابيض الذي أصدره وزير المستعمرات البريطانية في يونيو سنة 1922>>.- ملف وثائق فلسطين. ص 327-325.

[23] John Kimche, Palestine or Israel?, London, 1973, p. 88.

ները, և այն պետք է սահմանափակվեր՝ հաշվի առնելով Պաղեստինի՝ գաղթականներ ընդունելու տնտեսական կարողությունը[24]:

Այսպիսով, Փասֆիլդի Սպիտակ թուղթը ևս չնվազեցրեց հրեական ազգային օջախի հետ կապված անորոշության չափը: Մեր կարծիքով, այն միտված էր հրեաների ներգաղթի պատճառով մանդատային իշխանության հանդեպ Պաղեստինի արաբական համայնքի դժգոհությունը մեղմելուն: Սակայն, կրկին հստակ չէր նշվում, թե տարեկան որքա՞ն հրեա պետք է ներգաղթեր Պաղեստին, և վերջիվերջո, հրեական ազգային օջախի ստեղծման նպատակով հրեաները Պաղեստինի բնակչության քանի՞ տոկոսը պետք է կազմեին:

Այդուհանդերձ, սիոնիստական շարժման ներկայացուցիչները, հիմք ընդունելով այն, որ Պաղեստինի տնտեսական կարողությունը հաշվի առնելու դեպքում հրեաների ներգաղթը կարող էր սահմանափակվել, խիստ քննադատության արժանացրին Փասֆիլդի Սպիտակ թուղթը: Մասնավորապես, այդ առնչությամբ քննադատական հայտարարություններ արեցին ՀՍԿ-ի նախագահ Խայիմ Վայցմանը, ԱՄՆ-ում սիոնիստական շարժման առաջնորդներից ռաբբի Սթեֆեն Վայզը և այլոք[25]:

Փասֆիլդի Սպիտակ թղթի հանդեպ սիոնիստների դժգոհությունը մեղմելու նպատակով 1931թ. փետրվարի 13-ին Մեծ Բրիտանիայի կառավարության ղեկավար Ռամսեյ Մակդոնալդը նամակ ուղարկեց Վայցմանին՝ մասնավորապես նշելով, որ Նորին մեծության կառավարությունը մտադիր չէր դադարեցնել հրեաների ներգաղթը Պաղեստին, այլ «ուղղակի կարգավորելու էր դրա ընթացքը»՝ այդ երկրի՝ գաղթականներ ընդունելու տնտեսական կարողությանը համապատասխան[26]: Պաղեստինցի արաբներն այդ նամակը համարեցին «Սև նամակ», իսկ սիոնիստների կարծիքով՝ այն չեղյալ էր հայտարարում Փասֆիլդի Սպիտակ թուղթը[27]: Ըստ Վայցմանի՝ Մակդոնալդի վերոհիշյալ նամակը հնարավորություն տվեց, որ 1934թ. Պաղեստին ներգաղթեր 40 հզ., իսկ 1935թ. 62 հզ. հրեա[28]:

---

[24] <<الكتاب الأبيض لسنة 1930>>.- ملف وثائق فلسطين. ص 423-439.

[25] Robert John and Sami Hadawi, նշվ. աշխ., էջ 231-232:

[26] <<كتاب رسمي من رئيس الوزراء رمزي ماكدونالد الى الدكتور وايزمن في 13 فبراير>>.- ملف وثائق فلسطين. ص 533-538.

[27] William R. Polk, The United States and the Arab World, Cambridge, 1969, p. 168; Mark LeVine, The Discourses of Mandate Palestine, Arab Studies Quarterly. Vol. 17, Issue 1-2, Winter 1995, p.95-106.

[28] Chaim Weizmann, Trial and Error, New York, 1949, p. 335.

Հրեաների՝ նման մեծ չափերի հասնող ներգաղթն, անկասկած, պետք է խորացներ արաբների դժգոհությունը թե՛ Պաղեստինում հրեական համայնքի, թե՛ մանդատային իշխանության հանդեպ: 1935թ. նոյեմբերի 25-ին Պաղեստինի՝ 1930-ականների առաջին կեսին հիմնադրված հինգ արաբական կուսակցությունները համատեղ հուշագիր ներկայացրին բրիտանական գերագույն կոմիսարին՝ մասնավորապես պահանջելով անհապաղ դադարեցնել հրեաների ներգաղթը և կասեցնել նրանց՝ ընդարձակ հողատարածքների ձեռք բերման գործընթացը[29]: Փաստորեն, ի տարբերություն 1920-ականների՝ 1930-ականներին պաղեստինցի արաբները հրեական համայնքի՝ գերակա դիրքեր գրավելու հիմնական նախապայման էին համարում ոչ միայն հրեաների ներգաղթը, այլև նրանց՝ Պաղեստինում հողատարածքների ձեռք բերումը: Մեր կարծիքով, արաբների մտավախությունը, թե հրեաներն աստիճանաբար գերակա դիրքեր ձեռք կբերեին Պաղեստինում, բավարար հիմքեր ուներ, թեպետ, ինչպես նշեցինք, բրիտանացիները փորձում էին մեղմել Բալֆուրի հռչակագրի նկատմամբ նրանց դժգոհությունը: Սակայն իրողությունն այն էր, որ Պաղեստինում հրեա բնակչության թիվն արագորեն աճում էր: 1922թ. բրիտանական մանդատային իշխանության անցկացրած մարդահամարի համաձայն՝ այդ երկրում բնակվում էր 752 հզ. 048 մարդ, որից 585 հզ. 177-ը՝ մահմեդական, 83 հզ. 790-ը՝ հրեա, 71 հզ. 464-ը՝ քրիստոնյա, 7 հզ. 617-ը՝ դրուզ[30], բահայի[31] և այլոք[32]: 1922-1938թթ. Պաղեստինի բնակչության թիվն աճեց մոտ 91 %-ով, և 1938թ. մարդահամարի համաձայն՝ կազմեց 1 մլն. 435 հզ. 341 մարդ, որից 900 հզ. 256-ը՝ մահմեդական, 411 հզ. 263-ը՝ հրեա, 111 հզ. 983-ը՝ քրիստոնյա, 11 հզ. 839-ը՝ դրուզ, բահայի և այլոք[33]: Փաստորեն, 16 տարվա ընթացքում մահմեդականների թիվն ավելացավ 311 հզ. 079-ով (մոտ 53 %-ով), հրեաներինը՝ հիմնականում ներգաղթի շնորհիվ՝ 327 հզ. 473-ով (մոտ 400 %-

---

[29] Robert John and Sami Hadawi, նշվ. աշխ., էջ 253:

[30] Մահմեդական կրոնի շիա ուղղության իսմայիլական աղանդի ուրույն ճյուղավորման հետևորդներ դրուզները (արաբերեն՝ դուրուզ) մահմեդականներից առանձին էին ներկայացվում նաև օսմանյան վիճակագրության մեջ: Դրուզների աղանդն առաջացել է XI դարի սկզբին Եգիպտոսի իսմայիլականների շրջանում՝ Դարազիի (որի անունով էլ կոչվել են հետևորդները) քարոզչության ներգործությամբ: Մանրամասն տե՛ս՝ The Encyclopedia of Islam, Vol. II, Leiden, 1983, pp. 631-632.

[31] Բահայիներն աշխարհի նորագույն կրոններից մեկի՝ XIX դարում Պարսկաստանում ծագած բահայականության հետևորդներն են, որի հիմնադիրն է համարվում Բաբի աշակերտներից Միրզա Հուսեյն Ալին, որն իրեն անվանել էր Բահաուլլահ («Աստծու փառք»): Մանրամասն տե՛ս՝ Encyclopedie de L'Islam, T. I, Paris, 1960, pp. 943-946.

[32] Justin McCarthy, նշվ. աշխ., http://www.Palestineremembered.com/Acre/Palestine_Remembered/Story559.html.

[33] Նույն տեղում:

ով) չնայած, որ 1922թ. մահմեդականները Պաղեստինում մոտ յոթ անգամ ավելի էին, քան հրեաները:

Ինչ վերաբերում է հրեաների հողատարածքների ձեռք բերմանը, ապա նշենք, որ 1922թ. նրանք Պաղեստինում ունեին 781 հզ. 192 դունում[34] հող՝ այդ երկրի ընդհանուր տարածքի մոտ 2,9 %-ը, իսկ մինչև 1938թ. այդ թիվը գրեթե կրկնապատկվեց՝ կազմելով 1 մլն. 467 հզ. 225 դունում՝ Պաղեստինի ընդհանուր տարածքի մոտ 5,6 %-ը[35]: Այդ թվում, նույն ժամանակաշրջանում հրեաների ունեցած մշակելի հողատարածքներն ավելի քան եռապատկվեցին՝ 1922թ. 12,3 %-ի փոխարեն, 1938թ. կազմելով Պաղեստինի մշակելի տարածքի մոտ 37 %-ը[36]:

Փաստորեն, հրեաների՝ Պաղեստինում արաբների նկատմամբ գերակա դիրքեր գրավելու հեռանկարը 1936-1939թթ. արաբական ապստամբության հիմնական պատճառներից մեկն էր: Բացի այդ, բրիտանական մանդատային իշխանության նկատմամբ պաղեստինցի արաբների դժգոհության՝ ապստամբության վերածելու հարցում կարևոր դեր խաղաց նաև արաբական ազգային-ազատագրական պայքարի ընդհանուր վերելքը: Այդ եռամյա ապստամբությամբ արաբներն արտահայտեցին իրենց բողոքը թե՛ հրեաների ներգաղթի, թե՛ նրանց՝ Պաղեստինում ընդարձակ հողատարածքների ձեռք բերման, թե՛ բրիտանական մանդատային իշխանության դեմ: Զինված պայքար մղելով հրեական համայնքի և մանդատային իշխանության դեմ՝ պաղեստինցի արաբները փորձեցին նույնիսկ ստանալ նացիստական Գերմանիայի աջակցությունը[37], թեև լուրջ արդյունք չարձանագրեցին[38]: Պաղեստինի հարևան արաբական երկրները, մասնավորապես Սաուդյան Արաբիան, Իրաքը, Եգիպտոսը, Անդրհորդանանը և Եմենը, իրենց հերթին, քննադատեցին բրիտանական քաղաքականությունն այդ երկրում՝ կոչ անելով մանդատային իշխանությանը դադարեցնել հրեաների ներգաղթը[39]: Բրիտանական պաշտոնական տվյալների համաձայն՝ այդ եռամյա ապստամբության ընթացքում արաբահրեական բախումների և դրանք կանխելու նպատակով բրիտանական մանդատային

---

[34] Պաղեստինում մեկ դունումը հավասար է 910 մ²:

[35] Walid Khalidi, From Haven to Conquest, Beirut, 1971, pp. 841-843; Государство Израиль, Справочник, Москва, 1986, стр. 273.

[36] Renneth Stein, The Jewish National Fund: Sand Purchase Methods and Priorities, Middle Eastern Studies, Vol. 20, No. 2, April 1984, p. 191.

[37] Muftism and Nazism. http://notendur.centrum.is/~snorrigb/mufti 4.html.

[38] „Memorandum by the Head of Political Division VII, Berlin, February 28, 1939".- Documents on German Foreign Policy 1918-1945, Series D, Vol. V, Washington, 1953, pp. 810-811.

[39] Leila S. Kadi, Arab Summit Conferences and the Palestine Problem (1936-1950), (1964-1966), Beirut, 1966, pp. 6-7.

իշխանության միջոցառումների արդյունքում զոհվեց 3073 արաբ և մոտ 1000 հրեա[40]: Փաստորեն, այդ ապստամբությունը հանդիսացավ այն հիմնական գործոններից մեկը, որոնք բերկում մտցրեցին Պաղեստինում բրիտանական քաղաքականության մեջ:

1939թ. մայիսի 17-ին Նորին մեծության կառավարությունը հրապարակեց ենթամանդատային Պաղեստինում բրիտանական քաղաքականության վերաբերյալ երրորդ հայտարարությունը, որը գաղութների նախարար Մալկոլմ Մակդոնալդի անունով կոչվեց Մակդոնալդի Սպիտակ թուղթ: Այդ հայտարարության համաձայն՝ 1936թ. ի վեր Պաղեստինում բռնկված «խռովությունների» հիմնական պատճառը Պաղեստինի մանդատի մասին համաձայնագրում «հրեա ժողովրդի համար ազգային օջախ» արտահայտության անորոշությունն էր: Ուստի Նորին մեծության կառավարությունը գտնում էր, որ խաղաղության վերահաստատման և բոլոր համայնքների համար բարօրության ապահովման նպատակով անհրաժեշտ էր հստակ սահմանել Պաղեստինում բրիտանական քաղաքականության ուղեգիծը: Սպիտակ թղթում Մակդոնալդը հերքեց այն կարծիքը, թե Բալֆուրի հռչակագիրը հնարավորություն էր տալիս, որ Պաղեստինն աստիճանաբար վերածվեր հրեական պետության՝ մեջբերելով Չերչիլի Սպիտակ թղթի՝ «հրեա ժողովրդի համար ազգային օջախ» արտահայտության մեկնաբանությունը: Հաշվի առնելով այն, որ բրիտանական մանդատի շրջանում ավելի քան 300 հզ. հրեա ներգաղթել էր Պաղեստին, և հրեական ազգային օջախի բնակչության թիվն արդեն կազմում էր մոտ 450 հզ.՝ այդ երկրի ընդհանուր բնակչության մոտ մեկ երրորդը, և այն, որ հրեաներն այդ երկրում նշանակալի ձեռքբերումներ էին ունեցել, 1939թ. Սպիտակ թղթում գաղութների նախարարն արձանագրեց, որ բրիտանական մանդատային իշխանությունը կատարել էր Պաղեստինի մանդատի մասին համաձայնագրով «հրեա ժողովրդի համար ազգային օջախի» ստեղծմանը նպաստելու պարտավորությունը: Բացի այդ, հաստատվում էր, որ մինչ այդ մանդատային իշխանությունը հրեաների ներգաղթը խթանելիս հաշվի էր առել միայն Պաղեստինի՝ գաղթականներ ընդունելու տնտեսական կարողությունը՝ անտեսելով քաղաքական իրավիճակը: Սակայն, հիմք ընդունելով Պաղեստինում ստեղծված քաղաքական իրադրությունը, Մակդոնալդի Սպիտակ թղթի համաձայն, Նորին մեծության կառավարությունը մտադիր էր դադարեցնել հրեաների ներգաղթի միջոցով հրեական ազգային օջախի ընդլայնման գործընթացը: Այդուհանդերձ, կտրուկ

---

[40] Walid Khalidi, նշվ. աշխ., էջ 847: Anita Shapira, Eyeless in Zion, New Republic, Vol. 223, Issue 24, November 2000, pp. 10-26.

միջոցների չդիմելու նպատակով 1939թ. ապրիլի 1-ից հինգ տարվա ընթացքում թույլատրվելու էր ևս 75 հզ. հրեայի ներգաղթը Պաղեստին, որից հետո հրեաները կարող էին ներգաղթել միայն արաբական համայնքի համաձայնությամբ: Այսինքն՝ դրանից հետո բրիտանական մանդատային իշխանությունն այլևս պատասխանատվություն չէր կրելու հրեական ազգային օջախի ընդլայնման համար: Բացի այդ, 1939թ. Սպիտակ թղթի համաձայն՝ Մեծ Բրիտանիայի կառավարությունը մտադիր էր հանձնարարել Պաղեստինում բրիտանական գերագույն կոմիսարին կարգավորել և կասեցնել հրեաների՝ ընդարձակ հողատարածքների ձեռք բերման գործընթացը՝ հիմք ընդունելով այն փաստը, որ արաբների հողերի օտարման արդյունքում շատ արաբ վարձակալ հողագործներ մեծ մասամբ գործազրկության էին մատնվում, քանի որ հրեաների հողերում կիրառվում էր հիմնականում հրեական աշխատուժ: Եվ վերջապես, ըստ Մ. Մակդոնալդի՝ Նորին մեծության կառավարությունը նպատակ ուներ տաս տարվա ընթացքում չեղյալ համարել բրիտանական մանդատը և ձևավորել Մեծ Բրիտանիային դաշնակից պաղեստինյան անկախ պետություն, որտեղ արաբական և հրեական համայնքները տոկոսային համամասնությամբ ներկայացված կլինեին իշխանության մեջ[41]:

Այսպիսով, 1939թ. Պաղեստինում բրիտանական քաղաքականության վերաբերյալ հայտարարության համաձայն՝ «հրեա ժողովրդի համար ազգային օջախն», ընդհանուր առմամբ, արդեն ստեղծված էր: Ի տարբերություն նախորդ երկու Սպիտակ թղթերի՝ այդ փաստաթղթում իրապես փորձ արվեց հիմնականում վերացնել վերոհիշյալ արտահայտության հետ կապված անորոշությունը: Սակայն, հարկ է նշել, որ և՛ Բալֆուրի հռչակագիրը, և Պաղեստինում բրիտանական քաղաքականության վերաբերյալ վերոհիշյալ հայտարարությունները քաղաքական փաստաթղթեր էին, մինչդեռ «ազգային օջախ» արտահայտության իրավական ամբողջական ձևակերպման անհրաժեշտությունը կար: Մակդոնալդի Սպիտակ թուղթը չէր կարող իրավական ձևակերպում տալ քաղաքական փաստաթղթում շրջանառության մեջ դրված «ազգային օջախ» արտահայտությանը:

Եթե առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում աշխարհաքաղաքական իրադարձությունների համատեքստում Մեծ Բրիտանիայի շահերը պահանջում էին նաև «Բալֆուրի հռչակագիր» հրապարակել, ապա երկրորդ

---

[41] <<بيان الخطة السياسية الصادرة من حكومة جلالته في 17 مايو سنة 1939>>.- ملف وثائق فلسطين. ص 717-726.

աշխարհամարտի նախօրեին առաջ էր եկել «Մակդոնալդի Սպիտակ թղթի» անհրաժեշտությունը: «Հրեա ժողովրդի համար ազգային օջախ» արտահայտությամբ խուսավարելու հնարավորություն ստանալով՝ բրիտանացիներն, այնուամենայնիվ, ճկուն դիվանագիտությամբ որոշակիորեն հստակեցրին այն՝ փորձելով երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ՝

1. մեղմել բրիտանական մանդատային իշխանության հանդեպ պաղեստինցի արաբների դժգոհությունը, դրանով իսկ վերջ դնել Պաղեստինում արաբական ապստամբությանը և նվազեցնել արաբ ապստամբների՝ Եվրոպայում Մեծ Բրիտանիայի մրցակիցների հետ համագործակցության եզրեր գտնելու հավանականությունը;

2. որոշ չափով ընդառաջ գնալով պաղեստինցի արաբների պահանջներին՝ ապահովել Մերձավոր Արևելքում արաբական երկրների աջակցությունը Մեծ Բրիտանիային:

Փաստորեն, 1917թ. բրիտանական դիվանագիտության մեջ սկիզբ առած հրեական ազգային օջախի հարցի զարգացումն իր բարձրակետին հասավ մոտ 22 տարի անց: Թեպետ 1922-1939թթ. Մեծ Բրիտանիան կարողացավ խուսանավել «հրեա ժողովրդի համար ազգային օջախ» արտահայտության պարզաբանման հարցում, սակայն Եվրոպայում նախապատերազմական իրադրությունը և արաբական ազգային-ազատագրական պայքարի ընդհանուր վերելքի ուղեծրում 1936-1939թթ. Պաղեստինում արաբական ապստամբությունն ստիպեցին բրիտանացիներին որոշակիորեն բանաձևել այդ օջախի նշանակությունը, որն, ինչպես նշեցինք, քաղաքական բանաձևում էր, ոչ թե՝ իրավական: